ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ՝
Դպրոցի տնօրեն՝

Digitally signed by AYVAZYAN HOVSEP 2607590078
Date: 2023.09.26 12:03:43 AMST

Հ. Այվազյան

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Մեթոդմիավորման նախագահ՝Էմմա Կուրյանոսյան

2023-2024 ուս

Մեթոդական միավորման խնդիրները և նպատակները

1.Ուսումնասիրել և ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական որակների բարձրացմանը նպաստելու համար:

2. Մեթոդական միավորման բնագավառի առարկաները դասավանդելիս կարևորել ուսուցման բովանդակության գործնական կիրառական ուղղվածությունը:

3. Օտար լեզվի դասերը դարձնել աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացման միջոց՝ օգտվելով ժամանակակից մեթոդներից:

4.Կրթական գործընթացը չափորոշչային պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու նպատակով առաջնահերթ խնդիր է համարվում ռուսաց լեզվի և անգլերենի հանրակրթական նշանակության բացահայտումը, ռուսաց լեզվի և անգլերենի ուսուցման պարտադիր մակարդակի ապահովումը:Դրան էապես նպաստող գործոն համարել դասավանդման նոր մեթոդների կիրառումը նոր տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում:

5.Անցկացնել ընթերցումներ՝մանկավարժների մեթոդական վարպետության բարձրացման ուղղությամբ: Օգնություն սկսնակ ուսուցչին:

6.Կազմակերպել առարկայական շաբաթներ, մրցույթ-վիկտորինաներ, բազմաբնույթ առարկայական միջոցառումներ, օլիմպիադաներ:

7.ՈՒսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել

ա. Դաստիարակելու ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ակտիվ անձ և քաղաքացի:

բ. Բացահայտելու աշակերտների անձնային որակները և ապահովելու դասապրոցեսին մասնակցությունը:

գ. Ամրապնդելու հարգանք և հպարտություն հայրենիքի, բնության հանդեպ

դ. Օգնել աշակերտներին կողմնորոշվելու հասարակական բազմաբնույթ հարաբերություններում՝ տալով բնական գիտելիքների անհրաժեշտ պաշար:

Մ/մ գործունեության հիմնական ուղղությունները

	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետը	Կատարման պատասխանատու	
1.	Մ/մ նիստերի կազմակերպում: Առարկայական չափորոշիչների,ուսումնական ծրագրերի և դրանց բացատագրերի, դասգրքերի, մեթոդական ուղեցույցների, նամակների, ձեռնարկների,մասնագիտական,մեթոդամանկավարժական ամսագրերի և թերթերի,հոդվածների ուսումնասիրումը և քննարկումը:	Յուրաքանչյուր ամիս Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում Տարվա ընթացքում	Մ/միավորման անդամներ, նախագահ	
2.	Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի բաշխում, ուսումնական ծրագրերի, թեմատիկ պլանների կազմում, քննարկում, ներկայացնելով տնօրենի հաստատմանը:	28.08-10.09 2023թ.	Տնօրեն, փոխտնօրեն, մ/միավորման անդամներ, նախագահ,	
3.	Բաց դասերի, միջոցառումների կազմակերպում և նպատակային քննարկում, փոխադարձ դասալսումներ:	Տարվա ընթացքում	Մ/միավորման անդամներ, նախագահ	

4.	Կատարել սովորողների գիտելիքների որակի, առարկայի դասավանդման վիճակի վերլուծություն: ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործման ուղիների ընտրություն:	Տարվա ընթացքում	Մ/միավորման անդամներ, նախագահ	
5.	Մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձի փոխանակում,մեթոդական խորհրդատվությունների,ինչպես նաև խորհրդակցությունների ,փորձառու մանկավարժների մոտ դասալսումների կազմակերպում	Տարվա ընթացքում	Մ/միավորման անդամներ, նախագահ	
6.	Մասնագիտական և մանկավարժական, մեթոդականխորհրդատվությունների,ինչպես նաև խորհրդակցությունների կազմակերպում,դասավանդման նոր մեթոդների մշակում և ներդրում:	Տարվա ընթացքում	Մ/միավորման անդամներ, նախագահ	
7.	Ներդպրոցական առարկայական մրցույթների, օլիմպիադաների կազմակերպում:	Դեկտեմբեր-հունվար	Փոխտնօրեն,մ/միավոր ման անդամներ, նախագահ	
8.	Առարկայական ուսումնասիրությունների կատարում, միջին դպրոցի ռուսաց և անգլերեն լեզուների դրվացքի ուսումնասիրում, արդյունքների քննարկում:	Տարվա ընթացքում	Մ/միավորման անդամներ, նախագահ	
9.	ՈՒշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին, նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն:	Տարվա ընթացքում	Մեթոդ միավորման անդամներ, նախագահ,փոխտնօրեն, տնօրեն	

10.	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործ աշխատանքի:	Տարվա ընթացքում	Մ/միավորման անդամներ, նախագահ	
11.	Ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում և արդյունքների քննարկում տնօրենության ընդլայնված նիստում	Մայիս	Տնօրեն,փոխտնօրեն, մ/միավորման անդամներ, նախագահ	

Մեթոդմիավորման կազմը

Անուն Ազգանուն	Կրթություն	Ինչ առարկա է դասավանդում
1.Կուղյանոսյան Էմմա	բարձրագույն	Գերմաներեն
2.Գևորգյան Հերմինե	բարձրագույն	Գերմաներեն
3. Գաբրիելյան Մարիետա	բարձրագույն	Ռ. լեզու
4. Մաթևոսյան Օգսաննա	բարձրագույն	Ռ. լեզու

Նիստերի օրակարգային պլան

1.Օգոստոս-
Սեպտեմբեր

Օրակարգի հաստատում:

- Առարկայական չափորոշիչների,ուսումնական ծրագրերի և դրանց բացատրագրերի, դասագրքերի,մեթոդական ուղեցույցների, մեթոդական

նամակների,ձեռնարկների,մասնագիտական,մեթոդամանկավարժական ամսագրերի ուսումնասիրում և քննարկում:

- Ուսումնական թեմատիկ պլանների կազմում, քննարկում և ներկայացում տնօրենի հաստատմանը:
- Մեթոդմիավորման աշխատանքային պլանի կազմում և ներկայացում տնօրենի հաստատմանը:
- Ուսպլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման առաջարկություն:
- 2023-2024 ուս.տարվա դասաբաշխման քննարկում և ներկայացում տնօրենի հաստատմանը:
- Թեմատիկ գրավոր աշխատանքների չափաքանակի քննարկում և ներկայացում տնօրենի հաստատմանը::

- Օտար լեզվի մ/միավորման գործունեության ներքին գնահատման մասին հաշվետվություն:

2.Հոկտեմբեր

Օրակարգի հաստատում**:**

- Կրթական բարեփոխումների և նորությունների մասսայականացում:
- 2-4 դասարաններում ընթերցանության գնահատման մասին:
- Թեմատիկ գրավոր աշխատանքի քանակի և բովանդակության քննարկում:
- ՈՒսուցչի տոնին նվիրված միջոցառման անցկացում:
- 6-րդ դասարանում բաց դասի անցկացում:
- Համացանցի օգտագործումը,որպես դասի արդյունավետության բարձրացման միջոց:

3.Նոյեմբեր

Օրակարգի հաստատում:

- Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում:
- Աշակերտների արժեքային համակարգի գնահատում / Մտածողության , ուշադրության, ուսման դրդապատճառների ստուգման համար առաջադրանքների ստեղծում/:
- Օտար լեզվից ուսուցողական և թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության որակի մասին քննարկում:
- 2023-2024թթ.հոբելյարներին նվիրված միջոցառումների պլանի կազմում և հաստատում:
- Աշակերտների արժեքային համակարգի գնահատում:
- 11-րդ դասարանում ինտերակտիվ մեթոդներով բաց դաս-միջոցառում :

4.Դեկտեմբեր

Օրակարգի հաստատում:

- Չափորոշչի կատարման ստուգում:
- Նախորդ ամսվա աշխատանքների ամփոփում:
- Ներդպրոցական առարկայական օլիմպիադաներին աշակերտների հայտագրման հարցի և կազմակերպչական աշխատանքների, հանձնաժողովի և նախապատրաստական աշխատանքների կազմում և քննարկում:
- Աշակերտների գիտելիքների ստուգում:
- Առարկայական շաբաթվա անցկացում (դաս-միջոցառումներ, կլոր սեղաններ, համակարգչային դասեր):
- «Այբենարանի հանդես և Ամանոր»--գերմաներենից ինտեգրված միջոցառում:

- Հաջորդ կիսամյակի աշխատանքների վերանայում , քննարկում:

Հունվար

Փետրվար

Օրակարգի հաստատում:

- Առաջին կիսամյակի աշխատանքների ամփոփում:
- Երկրորդ կիսակյակի անելիքների քննարկում:
- Տարածքային առարկայական օլիմպիադայի արդյունքների քննարկում:
- 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանների մշակում և տնօրինության կողմից հաստատում:
- Ա.Չեխովի ստեղծագործությունների հիման վրա դաս-միջոցառում ռուսաց լեզվից :
- Գնահատման մեթոդաբանության ճիշտ կիրառման ստուգում:
- Փոխադարձ դասալսումների անցկացում:
- Սկսնակ ուսուցիչների մասնագիտական կարողությունների և դասավանդման որակի բարձրացմանը նպաստող խորհրդատվություն:

Մարտ

Օրակարգի հաստատում:

- Ուսուցչի ինքնակրթությամբ զբաղվելը որպես դասավանդման որակի բարձրացման գլխավոր պայման:
- Արտադասարանական աշխատանքի կարևորության մասին:
- Գերմաներեն լեզվով ցերեկույթ՝ նվիրված մայրության տոնին:
- Ներկայացնել մեթոդամանկավարժական զեկուցում ,,Պրոբլեմային ուսուցումը օտար լեզվի դասերին” թեմայով:

Ապրիլ

Օրակարգի հաստատում:

● Հեքիաթագիր Գրի եղբայրներին նվիրված միջոցառում, բաց դասի

կազմակերպում:

- Մասնագիտական մանկավարժական մեթոդական խորհրդատվությունների և փոխադարձ դասալսումների անցկացում և քննարկում:
- ● 9-րդ դասարանի քննական տոմսերի առաջադրանքների ընտրում և քննարկում:

Մայիս

Օրակարգի հաստատում:

- Օնլայն մասնակցություն Հայրենական Մեծ պատերազմի տարեդարձին նվիրված ֆլեշմոբում:
- Օտար լեզվի ուսուցման արդյունքների ամփոփում:

- Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները և քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում:
- Ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում և արդյունքների քննարկում:
- Սովորողներին անհրաժեշտ ամառային առաջադրանքների ընտրում և քննարկում:

Հունիս

Օրակարգի հաստատում:

- Մ/մ առարկաներից աշակերտների առաջադիմության և որակի ամփոփում :
- Քննության արդյունքների վերլուծություն:
- Թեմատիկ գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:
- Ուսումնական պլանով նախատեսված պետական բաղադրիչի ժամաքանակի նախնական բաշխում:
- 2023-2024թթ.ուս.տարում մեթոդմիավորման կատարած աշխատանքների հաշվետվություն: